Պատասխաններ տաճարի մասին

Ինչպիսի՞ն է տաճարը ներսից

Տաճարը Տիրոջ տունն է Ներսում մաքուր է և գեղեցիկ: Բոլորը սպիտակ հանդերձներ են կրում և փորձում են ակնածալից լինել: Դա խաղաղ վայր է՝ Աստծուն երկրպագելու, սովորելու և Փրկչի սերը Սուրբ Հոգու միջոցով զգալու համար:



Ի՞նչ են անում մարդիկ տաճարում

Տաճարում մենք սովորում ենք Աստծո մասին և **ուխտեր** ենք կապում Նրա հետ: Մենք դա անում ենք՝ մասնակցելով **արարողություններին**, ինչպիսիք են՝ մկրտությունները, հաստատումները, նաև կնքվելով մեր ընտանիքների հետ:

Ինչպե՞ս պետք է հագնվեմ, երբ տաճար եմ գնում

Դուք պետք է հագնեք ձեր լավագույն հագուստները տաճարում: Ներս մտնելուց հետո դուք ձեր հագուստները կփոխարինեք հատուկ հագուստներով՝ արարողություններ կատարելու համար: Մկրտության համար տաճարի աշխատողները ձեզ կտան հատուկ սպիտակ հագուստ:

ԱՎԱՐՏԵՐԸ՝ ՍԻՄԻՆ ԲԼՈՔԵՐԻ

Ի՞նչ է նշանակում մկրտվել մահացածների համար

Տաճարում դուք կարող եք մկրտվել մարդկանց համար, որոնք մահացել են առանց մկրտվելու: Դուք սպիտակ հանդերձ կհագնեք և ամբողջովին կընկղմվեք ջրի մեջ:

Ի՞նչ է տաճարային երաշխավորագիրը

Տաճարային երաշխավորագիրը թղթի փոքրիկ կտոր է, որը ձեզ թույլ է տալիս մտնել տաճար: Դուք կարող եք ստանալ այն ձեր եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության անդամից: Նա կհարցնի ձեզ՝ արդյո՞ք պահում եք պատվիրանները և արդյոք ունեք վկայություն: Եթե դուք արժանավոր եք և պատրաստ եք մտնելու տաճար, նա ձեզ կտա տաճարային երաշխավորագիր:

Ի՞ՆՉ Է ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ:

Քահանայության արարողությունը սրբազան գործողություն է, որը կատարվում է Աստծո կողմից տրված իշխանությամբ և զորությամբ: Մկրտությունը, հաստատումը և հաղորդությունը արարողություններ են, որոնք տեղի են ունենում տաճարից դուրս: Տաճարային մկրտությունները, օծումները և կնքումները արարողություններ են, որոնք տեղի են ունենում տաճարի ներսում:



ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐԸ

ԽՈՍՏՈՒՄ

ՄԵՋ

Ի՞ՆՉ Է ՈՒԽՏԸ:

Ուխտը երկկողմանի խոստում է, որը մենք կապում ենք Երկնային Հոր հետ: Մենք խոստանում ենք Նրան որոշակի բաներ, և Նա խոստանում է լինել մեզ հետ և օրհնել մեզ: